Հարմարագույնը Թթու ջրինն է (Лысогорский перевал)—2 040 մ, որով խճուղին Ստեփանակերտ-Շուշուց ուղղվում է Գորիս։

Կուր և Արաքս գետերի ստորին հոսանքների տափաստաններից մուտքը դեպի Զանգեզուր ավելի ազատ է Դիզափայտի (Զիարաթի) դարավանդներից որևէ մեկով, մանավանդ այնտեղով, որտեղով այժմ էլ Դիզակի (Զիբրայիլի) կողմերից Շահիյոլ կոչվող ճանապարհով տափաստանների սարվորները իրենց անասուններով բարձրանում են Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակի ամառային ճոխ և փարթամ արոտավայրերը։ Այս ճանապարհը հնուց կապում էր Զանգեզուրը Միլի դաշտով Շիրվանի և Բաքվի հետ և դուրս էր բերում Կասպից դռնով կամ Ճորա պահակով (Դերբենդի անցքով) հյուսիս, դեպի ռուսական հարթության հարավային տափաստանները։ Ճորա պահակով Անդրկովկաս էին թափանցում հյուսիսից կիմմերները, սկյութացիք և այլ ազգեր մեր թվականությունից առաջ, իսկ ավելի ուշ՝ մանավանդ հոները։ Այդ մարդկային հեղեղների առջև Շահիյոլ ճանապարհով բացվում էր մուտքը դեպի Զանգեզուր։

Եթե Սյունիքի պատմագիրը՝ Ստեփաննոս Օրբելյանը[2], հետևելով ավանդությանը, վկայում է, թե Վաղարշակ առաջին Արշակունի թագավորի կարգադրությամբ Սիսակի ցեղին էր հանձնված «ընդդէմ կալ հանապազ պատերազմաւ դրանն Հոնաց»։ Այդ բանը շատ հասկանալի է, քանի որ Սիսականի (Սյունիքի) տերը, պահպանելով Ճորա պահակը՝ դրանով պահպանած էր լինում նաև իր տոհմական կալվածքները, մասնավորապես Շահիյոլ ճանապարհը։ Հավանական է, որ հենց այդ ճանապարհով են ներխուժել մոնղոլական ցեղերը Մուղանի դաշտում հաստատվելուց հետո։ Այս դարավանդով է վերադարձել էջմիածին Աբրահամ Կրետացի կաթողիկոսը Մուղանի դաշտից, Նադիր-շահի սուրն օրհնելուց հետո, դեպի Խնձորեսկ[3] Տաթևով և Մեղրիով Արարատյան դաշտը հասնելու համար։

Դիզափայտի (Զիարաթի) դարավանդների և Շահիյոլի ճանապարհի երկու կողմերումն է, որ տեղավորված են այժմ ադրբեջանական բնակչություն ունեցող գյուղերը, որոնք ներառնված են Ադրբեջանի Հանրապետության սահմանների մեջ։ Հայերը տեղավորված են Զանգեզուրի եռանկյունու վրա, Զանգեզուրի-Կոնգուր-Ալանդյազի լեռնաշղթայի և նրա լեռնաբազուկների հովիտներում, որտեղ Մեղրի (Զավնդուրի կամ Արեգունու-Մեղրի-Գյունեյի) լեռնաբազուկը՝ հեռանալով Կապ սարի (Զափլանդաղ կամ Այի-Զինգիլ) գագաթից դեպի արևելք, առանձնացնում է Մեղրու գավառակը Կապանից և Սիսիանից և Բուն Զանգեզուրից։ Հյուսիսային հատվածի այս գավառակներում ձևավորվել է մի այլ լեզվական ազգագրական միասնություն, որը թեև բազմաթիվ նմանություններ ունի ղարաբաղյան աշխարհի հետ, բայց ունի նաև շատ որոշակի տարբերություններ[4]։ Ներկա աշխատությունն առանձնապես կանգ կառնի այդ տարբերությունների վրա։

---

[2] Օրբէլեան Ստ., անդ, գլ. Դ, էջ 16։

[3] Աբրահամ Կրետացի, Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նադր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1820, գլ. ԽԸ։

[4] Զոկական շրջանի ազգագրական նկարագրությունը պիտի դառնա մեր մի այլ ուսումնասիրության նյութ, իսկ Լեռնային Ղարաբաղի հայերի ազգագրության վերաբերյալ նյութերն ամփոփել եմ մի այլ աշխատության մեջ (ռուսերեն ձեռագիր՝ Армяне Нагорного Карабаха)։ Զոկերի մասին գրել հեղինակին չի հաջողվել (Ծան. խմբ.)։